ԱՐԳԱՍԱԲԵՐ ԿՅԱՆՔ

(Մուրադ Հասրաթյանի ծննդյան 75-ամյակի առթիվ)



Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը հայկական ճարտարապետության ուսումնասիրության դասական՝ թորամանյանական դպրոցի ներկայացուցիչներից է: Նրա ուսումնասիրությունները կարևոր նշանակություն ունեն հայկական ճարտարապետության ճանաչողության խորացման և ծավալման գործընթացներում: Մ. Հասրաթյանի գործունեությունը բազմաբովանդակ է, իսկ վաստակը հագեցած է կարևոր ներդրումներով, ազգային և միջազգային առնչություններով:

Ստանալով փայլուն մասնագիտական կրթություն՝ Մ. Հասրաթյանը սկզբում որպես նախագծող ճարտարապետ աշխատել է Երևաննախագիծ ինստիտուտում: Նրա մասնագիտական բազմակողմանի ունակությունները դրսևորվել են նաև գիտահետազոտական աշխատանքում՝ որպես ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտաշխատող. 1988 թ. առ այսօր նա ղեկավարում է ինստիտուտի ճարտարապետության բաժինը: Հետագայում Մ. Հասրաթյանը ներգրավվել է նաև մանկավարժական ու հասարակական գործունեության ոլորտներում:

Մանկավարժության ասպարեզում Մ. Հասրաթյանի մասնագիտական թեքումը ճարտարապետության տեսության և պատմության, հուշարձանների վերականգնման բնագավառն է: Նա մինչև օրս դասավանդում է Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում, Երևանի պետական համալսարանում: Որպես հայ ճարտարապետության առաջավոր մասնագետ՝ 2000 թ. հրավիրվել է Սորբոնի համալսարան՝ վարելու «Հայկական միջնադարյան ճարտարապետություն» դասընթացը: Մ. Հասրաթյանը արդյունավետ դասախոսական գործունեության համար 2003 թ. ստացավ պրոֆեսորի կոչում: 2006 թվականը նշանավորվեց գիտնականի կյանքում. ընտրվեց ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Իսկ 2007 թ. արժանացավ ՀՀ վաստակավոր ճարտարապետի պատվավոր կոչման:

Մ. Հասրաթյանի առաջին գիտահետազոտական գործերը վերաբերել են հայկական արդի ճարտարապետությանը: Հեղինակն աստիճանաբար մասնագիտական ծանրակշիռ մեկնաբանություններով անդրադարձել է միջնադարյան ճարտարապետության կոթողներին: 1960-ական թթ. կեսերին հրատարակված՝ «Երևանի նոր դիմագծերից մեկը», «Երևանի վաղը», «Երևանի նորաձև փողոցները», «Երևանը երեկ, այսօր և վաղը» հոդվածների[1] տրամաբանական շարունակությունն էին «Երևան»(Մոսկվա, 1968, ռուսերեն) և «Խորհրդային Հայաստանի ճարտարապետությունը» (Մոսկ-

---

[1] *Այս և ստորև նշված Մ. Հասրաթյանի հոդվածների համար տե՛ս Մուրադ Հասրաթյան, Կենսամատենագիտություն, Ե., 2005, էջ 20-30:*

վա, 1972, ռուսերեն) գրքերը (հեղինակակիցներ՝ Վ. Հարությունյան և Ա. Մելիքյան):

Մ. Հասրաթյանի ստեղծագործական կենսագրությունում շրջադարձային էր 1969 թվականը. նա պաշտպանեց թեկնածուական ատենախոսություն՝ «Սյունիքի ԺԵ-ԺԸ դարերի ճարտարապետական համալիրները», որն առանձին գրքով 1973 թ. լույս տեսավ Երևանում: Մ. Հասրաթյանի աշխատությունը արժեքավոր հավելում էր մինչ այդ հրատարակված հայկական ճարտարապետության պատմության հայտնի ուսումնասիրություններին:

Հեղինակը գիտական զեկուցման ձևով պաշտպանության ներկայացված դոկտորական ատենախոսությունում՝«Հայաստանի ԺԵ-ԺԹ դարի սկզբի ճարտարապետությունը» (1993 թ.), հիմք ընդունելով իր և այլ հետազոտողների նորահայտ նյութերը, հիմնավորում է, որ ուշ միջնադարը հայկական ճարտարապետության զարգացման հետևողական և արժեքավոր փուլերից մեկն է: Թեպետ այս դարերում Հայաստանում չարձանագրվեցին Վերածննդի, բարոկկոյի վերելքները, սակայն շինարվեստում ցայտուն արտահայտվել են ազգային ավանդական ճարտարապետական դպրոցի նվաճումները, որոնք կամրջեցին զարգացած միջնադարյան և նոր ժամանակաշրջանի ստեղծագործական որոնումները: Ատենախոսությունը, որպես հայկական ուշ միջնադարյան ճարտարապետության կուռ և ամբողջական շարադրանք, ներառվել է «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյա ակադեմիական հրատարակության 5-րդ՝ դեռևս անտիպ հատորում:

Մ. Հասրաթյանի գիտաստեղծագործական ժառանգությունը կարելի է համակարգել երեք խմբի՝ հայկական ճարտարապետության համընդհանուր պատմության ուսումնասիրություններ, առանձին հուշարձանների և համալիրների վավերագրական վերլուծություններ, մասնագիտական քննական մեկնաբանություններ: Ընդամենը 18 գիրք, 25-ից ավելի գրքույկ և ուղեցույց, 200-ից ավելի հոդվածներ, թեզեր՝ հրատարակված գիտական հեղինակավոր ամսագրերում և հանդեսներում, մոտ 300 հանրագիտարանային հոդվածներ և այլն:

Մ. Հասրաթյանի՝ հայկական ճարտարապետության համընդհանուր պատմությանը վերաբերող աշխատությունները կարևոր ներդրումներ են այդ ոլորտում: Ֆրանսերեն ու ռուսերեն հրատարակված «Ակնարկ հայկական ճարտարապետության պատմության» (Մոսկվա, 1985) և հայերեն ու անգլերեն լույս տեսած «Հայաստան. Քրիստոնեական ճարտարապետության 1700 տարին»(Երևան, 2001, լուսանկարները՝ Զ. Սարգսյանի)» գրքերում և այլ հոդվածներում հեղինակը լրացրել է բնագավառի այս կամ այն դրույթները: Դա ակներև է նրա զանազան քննական կարգի հրատարակություններում, որոնցից առանձնանում են «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը Ֆրանսիայում», «Հայ միջնադարյան ճարտարապետության հիմնահարցերը «Բազմավեպի» էջերում», «Հայ միջնադարյան ճարտարապետության ուսումնասիրության ձեռքբերումները, ներկա վիճակը և անելիքները», «Հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը Իտալիայում» և այլ հոդվածներ:

Հայագիտության ասպարեզում 1980-1990 թթ. տպագրվեցին հայկական ճարտարապետության համընդհանուր պատմությանն առնչվող հիմնարար աշխատություններ: Արտասահմանյան հրատարակություններում հնարավորինս արտացոլված են Արևմտյան Հայաստանի նորահայտ նյութերը, մինչդեռ հայաստանյան հրատարակություններում ի մի են բերվել հայկական նոր ուսումնասիրությունները: Տվյալ գործընթացում Մ. Հասրաթ-

յանը իր աշխատություններում (բացի այն, որ ընդգրկում է հայաստանյան և արտասահմանյան հայագետների նորահայտ նյութերը) նաև ձրգտում է նորամույծ հուշարձաններով հարստացնել հայկական ճարտարապետության պատմության ընդհանրացնող դասակարգումները: Գիտնականը հայկական ճարտարապետության վերաբերյալ շարադրանքը հասցընում է մինչև արդի ժամանակներ, ներառյալ՝ խորհրդահայ ճարտարապետության նվաճումները: Նույն սկզբունքով է գրված նաև «Հայ արվեստի պատմություն» աշխատությունում ճարտարապետության ենթամասը, որի համար Մ. Հասրաթյանը 2009 թ. հեղինակային խմբի կազմում արժանացավ ՀՀ պետական մրցանակի:

Հայկական ճարտարապետության պատմության խնդիրներով են պայմանավորված նաև Մ. Հասրաթյանի՝ պատմական Հայաստանի առանձին ժամանակաշրջանների ճարտարապետության ուսումնասիրության վերաբերյալ աշխատությունները: Այս առումով կարևոր ներդրում է գիտնականի՝ անգլերենով և ռուսերենով լույս ընծայված «Վաղքրիստոնեական հայկական ճարտարապետություն» մենագրությունը (Մոսկվա, 2000): Գրքում առաջին անգամ ներկայացվում են այդ ժամանակաշրջանի հայտնի բոլոր հուշարձանները՝ իրենց ամենալայն դասակարգմամբ և լուսանկարչական ու գրաֆիկական հարուստ նյութերով: Փաստորեն, աշխատությունում վաղ միջնադարյան հուշարձանների դասակարգումը կատարվել է ոչ թե աղյուսակային կարգով, այլ հուշարձանների ծրագրային ընդգրկմամբ՝ ծավալատարածական ձևերի աստիճանական կազմավորման հերթականությամբ: Մ. Հասրաթյանի՝ վաղ և ուշ միջնադարյան ժամանակաշրջաններն ուսումնասիրող հրատարակությունները նշանակալի ներդրումներ են. դրանցից յուրաքանչյուրը ընդարձակում է հայկական ճարտարապետության հասկացությունները, ինչպես օրինակ՝ «Վաղ միջնադարյան Հայաստանի ճարտարապետները» հոդվածը: Պատմությունից հայտնի է, որ տարբեր մշակույթներում և ժամանակաշրջաններում ճարտարապետի մասնագիտությունը կոչվել է տարբեր անուններով: Այս առումով բացառություն չէ նաև հայոց պատմությունը: «Ճարտարապետ» բառը որպես մասնագիտական անվանում աղբյուրներում ի հայտ է գալիս միայն X դարից: Մինչ այդ վիմական արձանագրություններում, մատենագրական և հիշատակարանային տեղեկություններում «ճարտարապետի» փոխարեն օգտագործել են նաև որմնադիր, քարգործ, գաղատոս, վարդպետ և այլ անվանումներ: Մ. Հասրաթյանը պատմական աղբյուրների հիման վրա տվյալ անվանումներին հավելում է նաև «շինող» կոչումը: Սա, փաստորեն, ոչ միայն հարստացնում է միջնադարյան ճարտարապետների անվանացանկը, այլև հստակություն մտցնում աղբյուրներում հանդիպող հայկական եկեղեցաշինության ձևաբանական հասկացություններում:

Պատմական Հայաստանի տարածքների ուսումնասիրություններում Մ. Հասրաթյանը հիմնականում կենտրոնացել է Սյունիք և Արցախ նահանգների նյութերի վրա: Գիտնականի արցախյան ուսումնասիրությունները ոչ միայն շարունակում են Սյունիքի ուշ միջնադարյան ժառանգությունը և վաղ միջնադարյան հուշարձանների հարցերը, այլև հանձին «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» գրքի (Երևան, 1992)՝ խորանում են միջնադարյան դպրոցների տեսապատմական հասկացություններում: Հեղինակը դպրոցի վերլուծությունը կատարում է ոչ թե ծավալատարածական հորինվածքի մեթոդական հաջորդականությամբ, այլ փաստագրված նյութի տիպաբանական մեկնաբանությամբ, ինչպես որ այն արվել է Ստ. Մնացականյանի՝ Սյունիքի և Պ. Կունեոյի՝ Անիի դպրոցներին նվիրված աշխատություններում: Մ. Հասրաթյանն առաջա-

բանում հստակորեն ցույց է տալիս, որ ադրբեջանցիների՝ Արցախի հայկական հուշարձանների ազգային պատկանելության խեղաթյուրման փորձերը գիտականորեն սնանկ են: Նա սկզբում համեմատական վերլուծությամբ ուսումնասիրում է տարածքի վաղ քրիստոնեական հուշարձանները՝ դրանց հայկական միջնադարյան ճարտարապետության անքակտելի մասը լինելն ակներև դարձնելու համար. Ամարասի վանքում պահպանված Գրիգորիսի դամբարանը համեմատվում է IV-V դդ. հայկական նմանատիպ մյուս հուշարձանների հետ, հայկական զուգահեռներով համադրվում են նաև Արցախի Մոխրենիսի և Վանքասարի վաղմիջնադարյան եկեղեցիները: Մ. Հասրաթյանը Արցախի ճարտարապետության դպրոցի դրսևորումը դիտարկում է այդ տարածքի կարևորագույն վանքերի օրինակներով: Ընդգծելու համար խնդրո առարկա համալիրների պատկանելությունը հայ ազգային ճարտարապետությանը՝ հուշարձանների մեկնաբանությունը տանում է ուրվագծից դեպի շենքերի ներսույթն ու արտաքին ծավալը և ճակատային հարթությունների բնութագրումը: Այստեղ Մ. Հասրաթյանը հիմնական շեշտը դնում է Արցախին բնորոշ արվեստների սինթեզի (այ-սինքն՝ հարթության ու ծավալի թեմատիկ քանդակով ու զարդերով մշակման եղանակի) միջոցով ճարտարապետական տարածության ստեղծման վրա:

Մեծ է հեղինակի իմացությունը՝ վանքային համալիրների բովանդակ շենքերի տիպագոյացման առանձնահատկությունների բնութագրման հարցում: Նման արցախյան բնագծերից է միանավ բազիլիկ և «ներգծված խաչ» եկեղեցական տիպերի նախասիրությունը տարածքում: Վերջիններիս կարևորագույն ներկայացուցիչներն են Գանձասարի և Դադիվանքի գլխավոր եկեղեցիները: Նշված ընդհանրությունների հետ Արցախի դրպրոցն ունի նաև որոշ յուրահատկություններ, օրինակ՝ թաղածածկ դահլիճ-ների լայն տարածումը, ներսից ուղղանկյուն խորանով եկեղեցիների զանգվածային օգտագործումը և այլն:

Վանքային համալիրների ուսումնասիրությունը Մ. Հասրաթյանի տարերքն է: Փաստորեն, նրա երկու ատենախոսությունների հիմնական առանցքը վանքերի քննական փաստագրումն ու արվեստաբանական արտահայտիչ վերլուծությունն են: Հատկապես ուշագրավ է այդ ուսումնասիրությունների հրապարակումը հայերենին զուգահեռ նաև այլ լեզուներով՝ ռուսերեն, ֆրանսերեն, երբեմն անգլերեն: Կարևոր են իտալական «Հայ ճարտարապետության վավերագրեր» մատենաշարով հրատարակված գործերը՝ «Կեչառիս» (1982, համահեղինակ՝ Ա. Ալպագո Նովելլո), «Գանձասար» (1987, համահեղինակ՝ Բ. Ուլուբաբյան), «Նորավանք» (1995, համահեղինակներ՝ Ա. Ալպագո Նովելլո և Ջ. Յենի): Հեղինակի գրչին են պատկանում նաև բազմաթիվ այլ վանական համալիրների ուսում- նասիրություններ. «Սաղմոսավանքը» (համահեղինակներ՝ Գ. Գևոնյան, Ա. Հախնազարյան, Երևան, 2002) և «Կեչառիսի վանքը» (համահեղինակ-եր՝ Կ. Մաթևոսյան և Վ. Դևրիկյան, Երևան, 2004): Այս խմբում կարելի է ընդգրկել նաև հետևյալ հոդվածները՝ «Հայ ճարտարապետության և քանդակագործության նորահայտ հուշարձաններ Նորավանքում», «Նորավանքի վանական համալիրի ճարտարապետությունը և պատկերաքանդակները», «Շիրակի վաղ միջնադարյան ճարտարապետական անսամբլները», «Հայոց դարձի նախասկիզբ սրբավայր Խոր Վիրապի վանքը», «Ս. Վարդանին և Ս. Վարդանանց նվիրված վանքերը և եկեղեցիները», «Մուղնու վանքի ճարտարապետական համալիրը», «Մարմաշենի վանքը» և այլն:

Պակաս արժեքավոր չեն նաև Մ. Հասրաթյանի՝ հայկական ճարտարապետության հուշարձանների փաստաչափագրական ուսումնասիրություն-

ները: Դրանցից են «Դդմաշենի VII դարի գմբեթավոր դահլիճ եկեղեցին», «Արգինայի տաճարի հատակագծի վերակազմությունը», «Սարակապի կենտրոնագմբեթ եկեղեցին», «Մոխրենիսի քառակոնք եկեղեցին», «Էջմիածնի Շողակաթ եկեղեցու թվագրման հարցի շուրջը», «Տեկորի Ս. Սարգիս վկայարանը», «Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետությունը Ղազար Փարպեցու օրոք», «Էջմիածնի Հռիփսիմեի եկեղեցին» և այլ գործեր:

Հուշարձանների ուսումնասիրության ասպարեզում կարևոր են հատկապես Մ. Հասրաթյանի տիպաբանական, հորինվածքային, շինարվեստի, ճարտարապետական փոխազդեցությունների հետազոտությունները, որոնք ներդրումներ են ոչ միայն հայկական, այլև առհասարակ քրիստոնեական ճարտարապետության հետազոտական ժառանգությունում:

Մուրադ Հասրաթյանն իր նվիրյալ գործունեության շնորհիվ արժանացավ բազմաթիվ բարձր մրցանակների և պատվավոր կոչումների: Գիտնականի երեքքառորդդարյա անցած տարիների ուղին արգասաբեր է: Այսօր նա լիավյուն ստեղծագործում է և անխոնջ մասնակցում սերունդների պատրաստման գործին: Հայ ճարտարապետության ուսումնասիրության երախտավորին 75-ամյակի առթիվ մաղթում ենք առողջություն, հաջողություն և նոր նվաճումներ հայագիտության բնագավառում:

ՔԵՐԹՄԵՆՋՅԱՆ Դ. Գ.
Ճարտարապետության դոկտոր